ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյան (լիազորագիր տրված՝ 22.05.2019թ.))

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Բաղրամյան (լիազորագիր տրված՝ 23.05.2019թ.)

Քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կողմից 16.05.2019թ. ներկայացված և 17.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>«Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկի լես» ՍՊ ընկերությունների (հետայսու նաև՝ Կոնսորցիում) 16.05.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել էր «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվել է Կոնսորցիումի կողմից, սակայն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես հրավերի 2-րդ մասի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում, 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է հավելված 6.1-ով սահմանված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նշված անհամապատասխանությունը շտկելու նպատակով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, մինչև անհամապատասխանությունը շտկվի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից:

Հանձնաժողովի կողմից նախանշված անհամապատասխանությունները շտկվել են մասնակցի կողմից և 07.05.2019 թվականի գնահատող հանձնաժողովը շարունակել է աշխատանքները: Հանձնաժողովն ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերն արձանագրել է, որ «մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի մատակարարման պայմանագրեր, ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ,

ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովն արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում armeps.am համակարգում, համաձայն որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր»:

Սույն պատճառաբանությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

Կոնսորցիումը գտնում է, որ հանձնաժողովի գործողություններն իրավաչափ չեն, և չեն բխում ոլորտը կարգավորող օրենքի, իրավական ակտերի և հրավերով սահմանված պայմաններին:

Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:»

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի («Մասնագիտական փորձառություն») ա/ կետով սահմանված է, որ «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը»:

Հանձնաժողովի այն պատճառաբանությունը, որ արդեն իսկ համակարգում հրապարակվել էր պարզաբանում, որ տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր, գնահատում ենք, որ դա բավարար հիմնավորում և իրավական առումով չկարգավորված պատճառաբանություն է՝ հետևյալ մեկնաբանման և իրավական կարգավորման համատեքստում:

Ըստ էության, հանձնաժողովը այդ պատճառաբանությամբ փաստում է, որ հրապարակված պարզաբանման բովանդակությամբ հրավերի փոփոխություն է տեղի ունեցել, գուցե և ընդհանուր կանոնից բացառող կոնտեքստով:

Օրենքի 29-րդ հոդվածով կարգավորվում է հրավերի պարզաբանումը և դրանում փոփոխություն կատարելը, որի համաձայն՝

«1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման եւ պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաեւ, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

5. Բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

6. Սույն հոդվածի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը»:

Կոնսորցիումը հայտնել է, որ ուշագրավ հանգամանք է, որ գնահատող հանձնաժողովն անուղղակի արձանագրել է այն մասին, որ պարզաբանման արդյունքում փոփոխվել է հրավերի 1-ին մասին 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունը «և/կամ այլ արտադրանքների» պահանջի մասով, սակայն հրավերում փոփոխություն չի կատարվել օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 29-րդ հոդվածի պարզ մեկնաբանությունից ակնհայտ է, որ հրավեր ներկայացնողը պետք է պարզաբանման արդյունքում սահմանված ժամկետում կատարեր փոփոխություն, որպեսզի տարընկալման և ապակողմնորոշող հիմքեր չստեղծվեր մասնակիցների համար: Եթե հրավերում պատվիրատուն փոփոխություն չի կատարել, ապա մասնակիցը հիմքեր չուներ ենթադրելու, որ իր ներկայացրած պայմանագրերը չեն համապատասխանի հրավերի վերոնշված պահանջին:

Անդրադառնալով պարզաբանմանը, որ «տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ», չունի որևէ մեկնաբանությամբ հիմնավորող եզրույթ, այն կարելի է ընկալել պարզպես ցանկություն:

Պարզաբանումն իրենից ենթադրում է, իրավական, կառուցվածքային այս դեպքում նույնիսկ փայտի արտադրության տեխնիկական կանոններին չհամապատասխանող, եթե ոչ մասնագիտական հետազոտության վրա հիմնված, ապա նվազագույնը տրամաբանական հիմնավորում պահանջող դիրքորոշում, եզրահանգում, մինչդեռ՝ պատվիրատուի կողմից ներկայացված պարզաբանումը չի ենթարկվում եզրույթային նկարագրման որևէ կանոնի, ուստի այն չի կարող բացառել, որ տախտակը և/կամ գերանը փայտե արտադրանք չէ:

Ներկայացված պարզաբանման տրամաբանությունից ելնելով, ցանկացած փայտե արտադրանք Պատվիրատուն կարող էր դիտարկել ոչ նմանատիպ:

Ի դեպ հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնով սահմանված է հրավերի պարզաբանման և փոփոխության ընթացակարգը՝ համաձայն Օրենքի 29-րդ հոդվածի:

Պատվիրատուն չղեկավարվելով օրենքով սահմանված կարգով և փոփոխություն չկատարելով հրավերում, իրավասու չէ գնահատել մասնակցի ներկայացրած փաստաթղթերը ոչ համապատասխան եւ մերժել վերջինիս հայտը:

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի հանձնաժողովը մերժում է հայտը, եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված է «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:»

Կոնսորցիումը նշել է, որ այս ընդհանուր կանոնից չի կարող արձանագրել, որ բացառություն է նախատեսել պատվիրատուն:

Կոնսորցիումը ներկայացված բողոքով խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բավարար գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնման ընթացակարգով «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) ներկայացրած փաստաթղթերի համապատասխանութունը հրավերին, նրան ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից և կնքել մատակարարման պայմանագիր:

Ի լրումն ներկայացված բողոքի Կոնսորցիումը հայտնել է հետևյալը.

«Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը 16.05.2019թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 5 արձանագրությունը: Արձանագրությունը կայքում հրապարակվել է 07 մայիսի 2019 թվականին: Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել բողոքաբերը:

Բողոքարկման իրավական հիմքն է «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ի թիվս այլի, նաև՝ 29-րդ հոդվածը, որը սահմանում է հրավերի պարզաբանումը և դրանում փոփոխություն կատարելը, որով չի ղեկավարվել պատվիրատուն, ինչպես նաև՝ Ընկերության ներկայացրած փաստաթղթերի գնահատումը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին սուբյեկտիվ և անհիմն մեկնաբանումը: Մրցույթի մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատման ընթացակարգը սահմանված է համապատասխան իրավական ակտերով և այդ գործընթացը, այնուհետև այն արձանագրելը չի կարող ունենալ սուբյեկտիվ և օրենքով չկարգավորված մոտեցում:

Կոնսորցիումի կողմից 16.05.2019 թվականին բողոք ներկայացնելուց հետո, Պատվիրատուն վերանայել է արդեն իսկ 07.05.2019 թվականին հրապարակված թիվ 5 արձանագրությունը և իր դիտարկմամբ հայտնաբերել է ենթադրյալ ևս մեկ անհամապատասխանություն բողոքաբերի ներկայացրած փաստաթղթերի առնչությամբ և 17.05.2019թ հրապարակել է լրացում կատարված թիվ 5 արձանագրությանը: Պատվիրատուն այս կերպ ևս մեկ անգամ խախտել է օրենքով կարգավորվող գնումների ընթացակարգը և ինքն իրեն վերապահել է լիազորություն՝ ևս մեկ անգամ վերանայելու փաստաթղթերը և շտկելու իր բացթողումները: Իրենց կողմից բաղթողում համարվող արձանագրած խախտմանը կանդրադառնամ քիչ հետո:

Գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերի համակարգը չի լիազորում Պատվիրատուին արդեն իսկ հրապարակված և այդ արձանագրության բողոքարկման ժամկետի ավարտից հետո ևս մեկ անգամ վերանայել մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերին և իրավական ակտերին: Ողջամտորեն հարց է առաջանում, եթե Պատվիրատուն 07.05.2019թ թիվ 5 արձանագրությամբ իր գործողությունների իրավաչափությունը գնահատել է օրենքին համապատասխան և օբյեկտիվ, այդ դեպքում ինչն է հիմք հանդիսացել բողոքը ստանալուց հետո ևս մեկ անգամ վերանայել Ընկերության ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով պահանջներին:

Այսպիսով, պատվիրատուի կողմից վերանայված, նոր բովանդակությամբ արձանագրությունը հրապարակվել է 17.05.2019թ, որը ենթադրում է, որ հրապարակման օրվանից բողոք ներկայացնելու նոր ժամկետ է սկսում հոսել: Պատվիրատուի այս ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում խաթարվում է գնումների գործընթացը կարգավորող իրավական համակարգը, քանի որ ժամկետների սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակի չէ, ժամկետներով սահմանափակումն ուղված է կամայականություններից և տարաբնույթ անօրինականությունից խուսափելու համար:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածն ամրագրում է օրինականության սկզբունքը, համաձայն որի՝ 1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշմամբ ամրագրված չէ, որ պատվիրատուն լիազորված է գնման գործընթացի ամփոփ արձանագրությունը մի քանի անգամ վերանայել և լրացումներ կատարել:

Պատվիրատուն 17.05.2019թ հրապարակված արձանագրությունը լրացրել է հետևյալ բովանդակությամբ «….հետազոտման արդյունքում պարզ դարձավ, որ նմանատիպ պայմանագրերին կցված չեն հաշիվ ապրանքագրերը…»:

Պատվիրատուն հավանաբար լավ չի ուսումնասիրել ներկայացված փաստաթղթերը, քանի որ իր մատնանշած հաշիվ ապրանքագրերը կցված են եղել ներկայացված պայմանագրերին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սույն հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն նորմի համաձայն պատվիրատուն պարտավոր է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Հավանաբար պատվիրատուն ղեկավարվելով օրենքի պահանջով ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը բողոք քննող անձին, որը հնարավորություն կունենանք ուսումնասիրել հաջորդ լսման ժամանակ, միևնույն ժամանակ Ընկերության կողմից նույնպես կներկացվեն այն փաստաթղթերը, որոնք ներկայացվել են պատվիրատուին, այդ թվում հաշիվ ապրանքագրերը:

Կոնսորցիումը հայտնել է, որ Բողոքով ներկայացվել է փաստական հիմք, որ Պատվիրատուի կողմից պարզաբանում տալու դեպքում, որը բերում է հրավերի և՛ բովանդակային նշանակության առումով, և՛ սահմանափակում, բացառություն նախատեսող կարգավորման պետք է հրավերում կատարվեր փոփոխություն համաձայն օրենքի 29-րդ հոդվածի:

Պատվիրատուն իր ներկայացրած դիրքորոշմամբ հայտնում է, որ «հրավերի պահանջները մնացել են անփոփոխ, իսկ գնահատող հանձնաժողովը օրենքով

սահմանված կարգով նման պարտավորություն չունի հրավերում կատարել փոփոխություն պարզաբանման արդյունքում:»

Նման դիրքորոշումից ելնելով հարց է առաջանում, եթե հրավերը մնացել է անփոփոխ, ապա որ կարգավորումից ելնելով են պատվիրատուն դիտարկել, որ բողոքաբերի ներկայացրած պայմանագրերը չեն հավաստում «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով և գնահատել են ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով հրավերը չի կարող արձանագրել, որ նրանում բացառվել է, որպես արտադրանք տախտակի և գերանի մատակարարումը:

Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի («Մասնագիտական փորձառություն») ա/ կետով սահմանված է, որ «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:» Սույնից հնարավոր չէ տարանջատել արդյոք տախտակը չի կարող դիտարկվել որպես արտադրանք: Ինչ վերաբերում է հրավերում փոփոխություն կատարելու պարտավորությանը, ապա այն ամրագրված է օրենքի 29-րդ հոդվածով:

Պատվիրատուն դիրքորոշում է հայտնել, որ «Փայտյա այլ արտադրանքներ ասելով, հանձնաժողովն ի նկատի է ունեցել փայտից (տախտակից) արտադրության արդյունքում ստացվելիք արտադրանքը (սեղան, աթոռ, կահույք, պատուհան, դուռ և այլն)….»:

Մասնակիցը հրավերով առաջնորդվելով չի կարող գուշակություն անել թե ինչ նկատի ունի պատվիրատուն, նկատի ունենալը չի կարող առաջացնել իրավական հետևանք: Պատվիրատուի դիրքորոշումը «և այլն» սահմանումը կրկին չի ձևակերպում պահանջի հստակություն, ուստի բավարար հիմք է ձևավորվում եզրահանգելու, որ պատվիրատուի կողմից նման ձեևակերպումները, օրենքով չառաջնորդվելը, միտված է նրան, որ մասնակիցները ներառվեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, սահմանափակելով մասնակիցների շրջանակը:

Միևնույն ժամանակ հայտնել է, որ բողոքաբերի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են օրենքով և հրավերով պահանջվող պայմաներին, սակայն պատվիարտուն մտացածին անհամապատասխանություններ է արձանագրել:

«Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության գնային առաջարկը 44.800.000 ՀՀ դրամ է, իսկ «Յունիք Լայն» ՍՊ ընկերության գնային առաջարկը՝ 51.250.000 ՀՀ դրամ է և այս

գնային տարբերության իրողության պարագայում գնահատող հանձնաժողովը անհիմն կերպով մերժել է «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության հայտը:

Բողոքաբերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հստակեցնելով բողոքի պահանջը խնդրել է. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) հայտը մերժելու և մերժված չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցնող «Յունիք Լայն» ՍՊ ընկերությանը որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասով կայացված 07.05.2019թ. կայացված որոշումները:

Կոնսորցիումը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.05.2019թ. ժամը 10:20-ին և 10.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.05.2019թ. գրության, ներկայացրել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Փայտե արկղեր (152մմ Դ-20 կրակոցի արկղ)» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ են ներկայացրել թվով հինգ մասնակիցներ, այդ թվում՝ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ–ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

03.04.2019թ-ին գնահատող հանձնաժողովը հաստատել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը և ՀՀ կառավարության 04.05.2011թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին մասի համաձայն հրապարակվել է տեղեկագրում և հայտերի բացումը տեղի է ունեցել 11.04.2019թ-ին ժամը 10:00-ին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետի 1) պարբերությամբ հստակ սահմանված է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը: Ավելին հրավերի հրապարակումից հետո մինչև հայտերի բացումը 04.04.2019թ-ին «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանման հարցում՝ թե արդյոք տախտակի մատակարարումը համարվում է նմանատիպ, ինչի կապակցությամբ ներկայացվել է պարզաբանում, համաձայն որի՝ տախտակի մատակարարման պայմանագրերը չեն դիտարկվում որպես նմանատիպ պայմանագրեր և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն 05.04.2019թ-ին հրապարակվել է տեղեկագրում armeps.am համակարգի միջոցով:

23.04.2019թ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) և վերջինիս armeps.am համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ, առաջարկվել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը (հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը): Սահմանված ժամկետում վերջինիս կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով

նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Սակայն վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Սահմանված ժամկետում «ՎիԷյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ներկայացրեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ դարձավ, որ նմանատիպ պայմանագրերին կցված չեն հաշիվ ապրանքագրերը և մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (бруc) մատակարարման պայմանագրեր:

Քանի որ մասնակցից Կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները որոշեց «ՎիԷյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ

համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

Օրենք 29-րդ հոդվածը և հրավերի 1-ին մասի 3-րդ կետով հստակ սահմանված են հրավերի վերաբերյալ մասնակցի կողմից պարզաբանում պահանջելու իրավունքները, համաձայն որի՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

5. Բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

6. Սույն հոդվածի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Իսկ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով և հրավերի 1-ին մասի 11-րդ կետի 11.4 ենթակետի 2-րդ պարբերությամբ հստակ սահմանված է, որ մասնակիցը գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները կարող է բողոքարկել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալը:

Սակայն բողոքաբեր մասնակցի կողմից հրավերի վերաբերյալ պարզաբանում չի պահանջվել և հրավերի պահանջները չեն բողոքարկվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալը, ավելին «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ–ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) իրենց կողմից ներկայացված Հավելված 1-ով (Դիմում գնանշման հարցմանը մասնակցելու) հավաստել են որ, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում են հայտ, իսկ Հավելված 2-ով (Հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին) հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և միայն վերջինիս հայտը մերժելուց հետո նոր ներկայացվել է բողոք: Այսինքն մասնակիցը տեղյակ է եղել և հրավերի պահանջներին և հրապարակված պարզաբանմանը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ հրապարակված պարզաբանման արդյունքում փոփոխվել է հրավերի պահանջը՝ կապված նմանատիպ համարվող պայմանագրերին և Օրենքով սահմանված կարգով հրավերում փոփոխություն չի կատարվել չի համապատասխանում իրականությանը, քանի որ հրավերի պահանջները մնացել են անփոփոխ, իսկ գնահատող հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով նման պարտավորություն չունի հրավերում կատարել փոփոխություն պարզաբանման արդյունքում:

Անդրադառնալով ներկայացված բողոքով հրավերի նմանատիպ համարվող փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների պահանջի և ներկայացված պարզաբանման վերաբերյալ բողոքաբերի մեկնաբանությանը հասկանում ենք, որ դա իր ցանկությունն է տախտակը կամ գերանը դիտարկել որպես նմանատիպ: Սակայն քանի

որ ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՊՆ կարիքների համար նախատեսվում է ձեռք բերել Փայտե արկղեր (152մմ Դ-20 կրակոցի արկղ), ուստի հրավերով նմանատիպ պայմանագրեր են սահմանվել արկղերի արտադրության և հնարավորինս ընդլայնելու մասնակիցների շրջանակը փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը: Փայտյա այլ արտադրանքներ ասելով հանձնաժողովը ի նկատի է ունեցել փայտից (տախտակից) արտադրության արդյունքում ստացվելիք արտադրանքը (սեղան, աթոռ, կահույք, պատուհան, դուռ և այլն) ոչ թե ծառի սղոցման արդյունքում ստացվելիք փայտը կամ տախտակը նույն տրամաբանությամբ բողոքաբերի համար կարող է նմանատիպ հանդիսանալ թեփի և վառելափայտի մատակարարման պայմանագրերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Ամփոփելով վերոգրյալը Պատվիրատուն հայտնել է, որ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է չունի ոչ մի օրենսդրական հիմնավորում և հիմնված է ենթադրությունների վրա:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.05.2019թ. ժամը 10:20-ին և 10.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Պատվիրատուի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու

նպատակով հայտ է ներկայացրել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին առաջարկվել է ներկայացնելու որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Սակայն վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը: Գնահատող անձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային

օրով կասեցրել է նիստը և առաջարկել է Կոնսորցիումին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

4. Նույն արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը 07.05.2019թ. շարունակելով աշխատանքները արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ներկայացրեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ դարձավ, որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր, ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում armeps համակարգով, համաձայն որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն արձանագրել է, որ մասնակցից Կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների

16.05.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոքի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված փվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ

ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար***, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման

նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 1.1 կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերումը:

Ընթացակարգի հրավերի Մաս Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ***<u>փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:</u>***

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. ***մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

Կոնսորցիումը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին առաջարկվել է ներկայացնելու որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և

դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Սակայն վերջինիս կողմից ներկայացվել է միայն թիվ 6 և 6.1 հավելվածները: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Նույն արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը 07.05.2019թ. շարունակելով աշխատանքները արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ՎիԷյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ներկայացրել է որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ է դարձել, որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր, ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում armeps համակարգով, համաձայն որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն արձանագրել է, որ մասնակցից Կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշեց «ՎիԷյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Կոնսորցիումն, որպես հայտով ներկայացված մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի և «Օլիմպ Սիտի Ստրոյ» ՍՊԸ-ի միջև 03.04.2018թ. կնքված թիվ 010AO-18/03 , «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի և «Սիրիուս» ՍՊԸ-ի միջև 01.08.2018թ. կնքված թիվ 012AC-18/07 պայմանագրերը, որոնց շրջանակներում Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են շրջահատած չորսուներ և եզրահատած տախտակներ ***(обрезная доска, брус обрезной թարգմ.՝ համաձայն «ՌՈՒՍ - ՀԱՅ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ» ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 1988թ.):***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: ***Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:***

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ ***<u>փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:</u>***

Այսպիսով, ամփոփելով վերը նշված փաստերը և համադրելով դրանք գործում առկա փաստաթղթերի հետ գտնում եմ, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված մատակարարման պայմանագրերով նախատեսված ապրանքատեսակները (շրջահատած չորսու և եզրահատած տախտակ) ըստ էության հանդիսանում են փայտյա այլ արտադրանք, ուստի սույն Ընթացակարգի իմաստով համարվում են նմանատիպ:

Հետևաբար արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն մասով անբավարար գնահատելով Կոնսորցիումի հայտը գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 61-րդ կետով, Կարգի 65-րդ կետով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 2.5 կետով սահմանված պահանջների խախտմամբ, ուստի գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերվում է ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոքի շրջանակներում Պատվիրատուի կողմից գրությամբ ներկայացված այն դիտարկմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կոնսորցիումի հայտը մերժվել է նաև այն հիմքով, որ վերջինիս կողմից ներկայացված պայմանագրերին կցված չեն հաշիվ ապրանքագրերը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված անհամապատասխանությունը արձանագրել է Ընկերության հայտը մերժելուց և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուց հետո՝ կատարելով հայտի վերագնահատում, մինչդեռ արձանագրում եմ, որ հայտը մերժելուց հետո գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ կրկին վերագնահատելու լիազորություններ գնահատող հանձնաժողովին վերապահված չեն, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից վերագնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը չի կարող սույն բողոքի քննության առարկա հանդիսանալ:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն դիտարկմանը, որ հրավերի հրապարակումից հետո մինչև հայտերի բացումը 04.04.2019թ. «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանման վերաբերյալ հարցում՝ թե արդյոք տախտակի մատակարարումը համարվում է նմանատիպ, ինչի կապակցությամբ ներկայացվել է պարզաբանում, համաձայն որի՝ տախտակի մատակարարման պայմանագրերը չեն դիտարկվում որպես նմանատիպ պայմանագրեր, ապա արձանագրում եմ, որ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով, այլ ոչ թե՝ Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված պարզաբանման հիման վրա:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կողմից 16.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ «Վիէյչ գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժելու, «Յունիք Լայն» ՍՊ ընկերությանը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և վերջինիս որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասով կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**